

դնելով այնտեղ բարոյական զգացման մի սերմ, որ մեռնել չէ կարող, վաթսուներորդ հարիւրաւոր պտուղ պիտի բերէ, եթէ չափազանց շատ չեն շուրջ պատող փշերն ու տատակները: Մեծ գործեր առհասարակ նա չէ կատարել. մի քանի տասնեակ տարիներ ընթացքում անցել է նա միայն մեր այս մարդկանց անապատ աշխարհի մի ծայրից միւսը՝ իւր անձն իրրեւ կենդանի օրի նստի ընծայելով, վկայութիւն գնելով ամենքի առաջ, թէ նախնեաց առաքինութիւններ ի մասին պատմածներն առասպելներ չեն, թէ հայութիւնը բարոյապէս իսպառ չէ մեռած, որովհետեւ այդպիսի առաքինիներ այսօր էլ կարող է արտագրել:

Այս կիրքից Սրբազանի մահով աշխարհից հեռանում է մի հազուագիււտ հայ, մի իսկական հայ, մի տղամարդ, որ խօսքի ճշմարիտ ասել գիտէր, մի քրիստոնեայ, որի համար իւր հաւատն ու իւր բարոյական պարտքերը հնչուն բռներ չէին միայն, մի հոգեւորական, որի մասին ոչ ոք չի համարձակի ասել, թէ նա ձեռք համար էր սեղգեստ հազունու:

Եւ այժմ երբ անմահ հոգին, թօթափելով իւր վերայից մարմնաւորն ու անցողականը գալիս պատկերանում է մեր աչքին իւր տեւական անանցանելի գծերով ու է որ երկիւղածութեամբ գլուխ չի խոնարհի այդ պատկառելի պատկերի առաջ, եթէ միայն նորա մէջ չէ մեռել բարոյական ըզգացման վերջին թոթիւրը, եւ ինչքան խորհրդաւոր է այդ պատկերը, ինչքան բազմախրատ ամենքիս համար: Մեզ հոգեւորականներին ասում է նա. պարտապան էք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ, զի եթէ ըստ մարմնոյ կեցէք մեռանելոց էք — կը մեռնիք, եթէ հոգեւոր կեանքի համար ոչինչ չէք վաստակել, եթէ տեւական, ասրելու ընդունակ ոչինչ ձեռք չէք բերել, կմեռնիք, եթէ նոյն իսկ ձեր փառքը աշխարհից աշխարհ պատուի, բերնէ բերան անցնի, մի քանի սերունդ մնայ. «իսկ եթէ հոգեւով զգործս մարմնոյ սպանանիցէք կեցցիք»: Մասնաւորապէս նորա աշակերտներին յորդորում է անլինջ դրոշմել այդ պատկերը իրենց յիշողութեան մէջ. ազերսել որ նորա հոգին իրենց վերայ ինչէ, պարտաճանաչ զգացումներ, առաքինի գործեր ներշնչէ: Եւ վերջապէս մխիթարում ու խրատ է կարգում քեզ, Հայոց Ժողովուրդ, մի վշատիր, եթէ քո հարազատ բարեկամների, քո հաւատարիմ աշխատաւորների թիւը պակասում է, սովորիք

միայն արդար վաստակը գնահատել, ալնիւն ու առաքինին զանազանել ու բարձր դասել կեղծ ու պատիր շողոքորթութիւններից, քեզ համար անկեղծութեամբ ցաւոյի դառն խօսքը քոյցը համարիք՝ այն ժամանակ անպակաս կլինին քո միջից կիրքից եպիսկոպոսներ, անպակաս իրենց անուանը արժանի հոգեւորականներ: Իսկ երջանիկ հանգուցեալը ոչ մի կարօտ չունի այլ ևս այս աշխարհից, մենք միայն զեղուն զգացմամբ և լիարուն բերանով նորա մարտը յիշատակն օրհնել կարող ենք. օրհնեալ է արդարի յիշատակը, օրհնեալ, ամէն:



ՊԼԵՏՈՆԱԿԱՆԻՔ.

ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԿԱԿՆԵՐԻՑ.

Կոնդակ յանուն Կոնստանտնուպոլիսի Ատրախանայ հմր. 2187, որով հրամայէ վաւերական համարել զպատկն Գէորգայ Մակարեան Ուլուխանեանց:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Յովհաննէս աւագ քահանայի Տէր Գալստեան և եղբօրն նորին Գալստի Տ. Գալստեան, սակս կառուցման Եկեղեցւոյ յԱխալքալուք գեղջ Գօրւոյ:

Կոնդակ յանուն պ. պ. Առաքելի Առափելեան, Սարգսի Իզրաշեան Ալեքսանդրի Տ. Յովհաննիսեան, Գնդ. Յովհաննիսի Քալանթարեան, Զաւատ բէգի Իշխանեան և Յակօբջան բէգի Խաչատրեան, հմր. 4, որով կարգին առ ժամանակեայ կառավարիչ տնտեսական մասին թեմ. հոգեւոր Գարանոցի Արցախու:

Կոնդակ յանուն Սինօղի Ս. Էջմիածնի, հմր. 19 որով հրամայի առաքել առ Վեհ. Հայրապետ զամենայն օրագիրս կազմեալս ի Սինօղի:

Կոնդակ յանուն Սինոգի Ս. Էջմիածնի  
Հմբ. 24, որով կարգին ի պաշտօն վանական  
կառավարութեան Մայր Աթոռոյ Գեր. Տ.  
Սարգիս եպիս. նախանգամ և բարեշնորհ Ղե-  
ւոնդ վրդ. Յովակիմեան և Թադէոս արեղայն  
Ասիւժեան Անգամբ:

Կոնդակ գոհունակութեան և օրհնու-  
թեան Հմբ. 31 յանուն Տիկին Մարիամու  
Բէզթարէգեան և Սր. Աննայի Չիբախեան սա-  
կըս նուիրելոյ մի հազար բււրլիս յօգուտ  
սովելոց:

Կոնդակ յանուն Գեր. Առաջնորդին Տրփ-  
խեաց Ս. Գէորգ Եպիսի. Հմբ. 57, որով շնոր-  
հի նմա զԱրքեպիսկոպոսութեան պատիւ:

Կոնդակ յանուն նոյն Առաջնորդի, Հմբ. 58,  
որով թողատրի նմա բանալ Օրիորդական  
Հոգևոր գպրոց ի Զաքարթալա քաղաքի:

Կոնդակ յանուն ճարտարապետ Նիկո-  
ղայոսի Գրիգորեան, Հմբ. 59, որով կարգի  
խնամակալ Նորաշէն գպրոցին Կուկիոյ Տրփ-  
խեաց, և արտօնի կոչել զայն Գրիգորեան:

Կոնդակ Օրհնութեան և գոհունակու-  
թեան, Հմբ. 77, յանուն Խորէն վարդապետի  
Փորթուգալեան և ազգայնոցն Կիպրոսի սա-  
կըս նուիրի ութ անգլիական ոսկւոյ յօգուտ  
սովելոց:

Կոնդակ յանուն Յովհաննէս աւագ քա-  
հանայի Տ. Գալստեան և Տիկին Ոսկեհատի Տ.  
Յովհաննէսեան (Մուրացան) Հմբ. 78, որով  
կարգին խնամակալ օրիորդական գպրոցին  
Ախալքալակ գեղջ Գօրւոյ:

Կոնդակ յանուն Սինոգի Ս. Էջմիածնի  
Հմբ. 102, վասն կտակի հանգուցեալ բժիշկ  
Տիգրանեանի Նոր Նախիջևանցոյ:

Կոնդակ յանուն Յովհաննէս վարդապետի.  
Շիրակունւոյ, Հմբ. 105 որով փոխադրի նա  
պաշտօնիւ փոխանորդութեան ի Տաթևէ ի  
Գանձակ:

Կոնդակ յանուն Գրիգորիս վրդ. Տէր Յա-  
կոբեան Հմբ. 106, որով կարգի փոխանորդ  
Հօտին Սիւնեաց ի տեղի Յովհաննէս վարդա-  
պետի Շիրակունւոյ:

Կոնդակ յանուն թեմ. Ատենին Վրաստա-  
նի և Իմերէթի, Հմբ. 107 որով յայտնի փո-  
խադրութիւն Գարեգին վարդապետի և հաս-  
տատութիւն Յովհաննէս վարդապետի Շիրա-  
կունւոյ ի Գանձակ:

Կոնդակ յանուն Եղիշէ Մատթեանի,  
Հմբ. 110 որով կարգի աեսուց թեմ. գպր.  
Շուշույ:


Կոնդակ յանուն Արիստակէս Եպիս. Գաւ-  
թեան Հմբ. 115, որով կարգի Նախագահ  
Տպարանական Ժողովոյ Մ. Աթոռոյ և յանդա-  
մութիւն Ժողովոյն բարեշն. Կոմիտաս և Եղ-  
նիկ Արեղայր:



Ո Ռ Ի Ս Ա Հ Ա Յ Ք.  
Ա. Երեւանի թեմ.



ԿԻԻՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐԱՊԵԱՆ.



Մարտի 8-ին յետ կարճատև հիւան-  
դութեան Նոր Նախիջևանում վախճանուեց  
Երևանի Փոխ-թեմակալ Արքազան Կիւրեղ ե-  
պիսկոպոս Արապեան, որ Ահհախառ Հայ-  
րապետի ուղեկիցներէից մինն էր, այս անու-  
կընկալ լուրջ խորին վիշա պատճառեց ամէն  
գասակարգի ազգայնոց, որպէս և Մայր Ա-  
թոռոյս միաբանութեան:

Կիւրեղ Արքազան ծնուած էր 1844 թը-  
ուին Տաճկաստանի Կեյվէ գիւղաքաղաքում  
որ պատկանում է ի կրօնականին Նիկոմի-  
դիոյ Առաջնորդութեան, աշխարհական ա-  
նունն Ալեքսան էր, նախնական կրթութիւն